ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

21-ը ապրիլի 2020թ.
Ժամը 10^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պետ, գնդապետ Ա. Թության,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության իրային գույքի պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա, մայոր Վ. Բարսեղյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա. Գրիգորյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Գրիգորյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Գրիգորյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար ճտքավոր կոշիկների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	<Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում> ՓԲԸ
2	<Գառու Գրուպ> ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Գրիգորյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

<Գառու Գրուպ> ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը պակաս էր 90 աշխատանքային օրից: <Գառու Գրուպ> ՍՊԸ-ն մինչև 22.04.2020թ. ժամը 17:00-ն գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, որում արդեն հայտի ապահովման գործողության ժամկետը հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր էր:

2.3 <Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում> ՓԲԸ-ի և <Գառու Գրուպ> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

<Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում> ՓԲԸ-ի կողմից ներկայացված ճտքավոր կոշիկների տեխնիկական բնութագրում նշված է՝

1. «Ճտքավոր կոշիկի երեսացուն պետք է լինի խոշոր եղջերավոր անասունի կաշվից՝ ստացված քրոմային դաբաղման եղանակով, սև գույնի, բարձր որակի բնական մակերեսով (կաշվի մշակումը նախշով (նակատով)», իսկ հրավերով սահմանված է «Ճտքավոր կոշիկի երեսացուն պետք է լինի խոշոր եղջերավոր անասունի կաշվից՝ ստացված քրոմային դաբաղման եղանակով, սև գույնի, բարձր որակի բնական մակերեսով (կաշվի մշակումը նախշով (նակատով) կամ հարթ, առանց վնասվածքների)»: Մասնակցի կողմից չի նշվել «առանց վնասվածքների» պահանջը:

2. «Նախշով (նակատով) կաշվից արտադրելու դեպքում քթամասը ներսի հատվածից մշակվում է բյազ և գաբարդին տեսակի կտորով», իսկ հրավերով սահմանված է «Հարթ կաշվով արտադրելու դեպքում քթամասը ներսի հատվածից մշակվում է բյազ կամ գաբարդին տեսակի կտորով, իսկ նախշով (նակատով) կաշվից արտադրելու դեպքում՝ կաշվե ներդիրով»: Հետևաբար, քանի որ մասնակցի կողմից առաջարկվել է նախշով (նակատով) կաշվից արտադրանք, ապա անհրաժեշտ է նշել, որ քթամասը ներսի հատվածից մշակվում է ոչ թե բյազ և գաբարդին տեսակի կտորով, այլ՝ կաշվե ներդիրով:

<Գառու Գրուպ> ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում նշված է «Ճտքերի վերնամասը երկկողմանի մշակվում է 1,1-1,3մմ հաստության և 2,0-3,0սմ լայնության բնական կաշվից, որի միջուկը մշակվում է 5,0-7,0 մմ հաստության, 60±0,5 կգ/մ3 խտությամբ սպունգե (պենոպոլիուրետան) կամ դրան համարժեք նյութով»: Մասնակցի կողմից պետք է առաջարկվի սպունգե (պենոպոլիուրետան) նյութ կամ կոնկրետ որևէ այլ նյութ, առանց կամ համարժեքի:

Հնարավորության դեպքում առաջարկվում է հստակեցնել նաև ներբանի ամրացման եղանակը /բարձր ճնշմամբ սոսնձման կամ ձուլման/, օգտագործվող կաշվի տեսակը /հարթ կաշի կամ նախշով /նակատով/ կաշի/, միաժամանակ ներկայացվող տեխնիկական բնութագրում ներառելով նաև մասնակցի կողմից ընտրված տարբերակին վերաբերող ցուցանիշները ու պահանջները:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 29.04.2020թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի բացման և գնահատման նիստը և ծանուցել <Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում> ՓԲԸ-ին և <Գառու Գրուպ> ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: <Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում> ՓԲԸ-ն և <Գառու Գրուպ> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունները և 04.05.2020թ. նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Գրիգորյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Նախահաշվային գումարը	1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության			Մրցույթին մասնակցող կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ընդհանուր		առանց ԱԱՀ	ընդհանուր
1	Ճտքավոր կոշիկներ	զույգ	25 000	350 000 000	Բանակցություն			<Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում> ՓԲԸ	290 000 000	348 000 000
2	Ճտքավոր կոշիկներ	զույգ	25 000	350 000 000	Բանակցություն			<Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում> ՓԲԸ	290 000 000	348 000 000
3	Ճտքավոր կոշիկներ	զույգ	25 000	350 000 000	Բանակցություն			<Գառու Գրուպ> ՍՊԸ	280 000 000	336 000 000
4	Ճտքավոր կոշիկներ	զույգ	25 000	350 000 000	Առաջարկի բացակայություն					

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները միակն էին, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները, գների նվազեցման նպատակով 07.05.2020թ. ժամը 15^{00}-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների հետ վարվել են բանակցություններ: <Գառու Գրուպ> ՍՊԸ-ն չի նվազեցրել գինը, իսկ <Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում> ՓԲԸ -ն չի ներկայացել բանակցությանը:

4-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած գնային առաջարկի բացակայության հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ա. Գրիգորյան)

4.1 07.05.2020թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների ընտրված մասնակիցներ են ճանաչվել՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով <Արցախ Կարի-Կոշիկի Արտադրական Միավորում> ՓԲԸ -ն, 3-րդ չափաբաժնի մասով <Գառու Գրուպ> ՍՊԸ-ն:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Գրիգորյան)

5.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Գրիգորյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/11» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը , ժամը 11:00-ին, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Թոփյան

Գնահատող Գ. Ուխտյան

Գնահատող Վ. Բարսեղյան

Գնումները համակարգող՝ Ա. Գրիգորյան